

## **ՁԵԿՈՒՅՑ**

**ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ (CPT)  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-17-Ը  
ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի կառավարությունը խնդրել է հրապարակել սույն զեկույցը և նրա վերաբերյալ ներկայացված պատասխանը: Կառավարության պատասխանը զետեղված է CPT/Inf (2010) 8 փաստաթղթում:

Ստրասբուրգ, 19 մարտի, 2010թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CPT գեկույցի ուղեկցական նամակի պատճենը .....	3
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
II. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	8
1. Նախնական դիտողություններ .....	8
2. Խոշտանգումներ և ֆիզիկական վատ վերաբերմունքի այլ ձևեր .....	10
3. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ երաշխիքներ ...	16
4. Ձերբակալվածներին պահելու պայմանները .....	19
ՀԱՎԵԼՎԱԾ I. CPT-ի առաջարկությունների, դիտողությունների և պահանջվող տեղեկատվության ցանկ .....	22
ՀԱՎԵԼՎԱԾ II. Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների պաշտոնատար անձանց ցանկ, որոնց հետ խորհրդակցել է CPT-ի պատվիրակությունը.....	27

## CPT գեկույցի ուղեկցական մամակի պատճենը

Եվրոպայի խորհրդում Հայաստանի  
մշտական ներկայացուցչություն  
40 allée de la Robertsau  
67000 Strasbourg

Ստրասբուրգ, 22 հուլիսի, 2008թ.

Հարգելի պարոն,

Համաձայն Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին պարբերության, կից փոխանցում եմ Հայաստանի կառավարությանը ներկայացվող գեկույցը՝ կազմված Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) կողմից՝ 2008թ.-ի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելությունից հետո: Չեկույցն ընդունվել է CPT-ի կողմից 2008թ.-ի հուլիսի 7-11-ը կայացած 66-րդ հանդիպման ժամանակ:

CPT-ի կողմից տրված զանազան առաջարկությունները, դիտողությունները և խնդրանքները թվարկված են Հավելված 1-ում: Ինչ վերաբերում է մասնավորապես CPT-ի առաջարկություններին, որոնք վերաբերում են կոնվենցիայի 10-րդ հոդվածին, կոմիտեն խնդրում է Հայաստանի իշխանություններին երեք ամսվա ընթացքում պատասխան տրամադրել՝ ներկայացնելով դրանց կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

CPT-ն վստահ է, որ Հայաստանի իշխանությունները կկարողանան տրամադրվող պատասխանում ներկայացնել իրենց արձագանքները սույն գեկույցում տրված դիտարկումների վերաբերյալ, որոնք ներկայացված են Հավելված 1-ում, ինչպես նաև արձագանքելու տեղեկատվություն տրամադրելու խնդրանքներին:

CPT-ին կխնդրեք, որպեսզի պատասխանները հայերեն տրամադրելու դեպքում, դրանք ուղեկցվեին անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանությամբ: Շատ օգտակար կլինեք, եթե Հայաստանի իշխանությունները կարողանային պատասխանի պատճենը տրամադրել նաև էլեկտրոնային տարբերակով:

Ես լիովին ձեր տրամադրության տակ եմ պատասխանելու ցանկացած հարցի, որ կվերաբերի CPT-ի գեկույցին կամ դրա հետագա ընթացքին:

Հարգանքով,

Մատրո ՊԱԼՍԱ

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի նախագահ

Պատճենը՝ Պրն. Նիկոլայ ԱՌՈՒՍԱՄՅԱՆԻՆՆ՝ արդարադատության նախարարի տեղակալ

## Ի ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն (այսուհետև՝ «Կոնվենցիա»)՝ CPT պատվիրակությունը 2008 թվականի մարտի 15-17 այցելեց Հայաստան: Այցելությունը նրանցից էր, որը Կոմիտեն համարում է «հանգամանքների պահանջով» (տես՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը) և հանդիսանում էր CPT-ի կողմից իրականացված չորրորդ այցը Հայաստան<sup>1</sup>:

2. Այցելությունն իրականացվել է՝

- Մարկ Նեվի (պատվիրակության ղեկավար)
- Իվան Յանկովիչի
- Ջորջ Տուգուշիի

կողմից, որոնց աջակցել է CPT քարտուղարությունից Պետյա Նեստերովան (Վարչության պետ):

Նրանց օգնել են՝

- Դերիկ Փոնդերը, Միացյալ Թագավորության Դանդիի Համալսարանի դատական բժշկության պրոֆեսոր (փորձագետ)
- Արտաշես Դարբինյանը (թարգմանիչ)
- Անահիտ Մեսրոպյանը (թարգմանիչ)
- Լևոն Շահգաղեյանը (թարգմանիչ):

3. Այցելության գլխավոր նպատակը 2008 թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունների կապակցությամբ ձերբակալված անձանց նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրությունն էր: Ընտրություններից հետո 2008 թվականի մարտի 1-ին տեղի էր ունեցել ոստիկանական գործողություն, որը նպատակ ուներ ցրել ընդդիմության հանրահավաքը Երևանում: CPT-ին տարբեր աղբյուրներից ստացել էր բազմաթիվ զեկույցներ, որոնց համաձայն այդ գործողության հետևանքով տասնյակ մարդիկ էին ձերբակալվել, հարյուրավոր մարդիկ տուժել էին և մի քանիսը՝ սպանվել ոստիկանության և ցուցարարների միջև տեղի ունեցած բախման արդյունքում: Այդ զեկույցների համաձայն՝ իրավապահ մարմինները հաճախ կիրառել են ոչ իրավաչափ ուժ ձերբակալությունների ժամանակ և մտահոգություն էր արտահայտվել ձերբակալվածների ճակատագրերի առնչությամբ: 2008 թվականի մարտի 1-ի ոչ երեկոյան Հայաստանի Նախագահի կողմից 20 օր ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիրը, որը սահմանափակումներ էր նախատեսում ի թիվս այլոց, նաև լրատվամիջոցների նկատմամբ և ժամանակավորապես

<sup>1</sup> 2002թ., 2004թ. և 2006թ.-ին կատարված նախորդ երեք այցերի առումով ներկայացված զեկույցները նրանց վերաբերյալ ներկայացված պատասխաններով հրապարակվել են Հայաստանի իշխանությունների խնդրանքով (տես՝ CPT/Inf (2004) 25, CPT/Inf (2004) 26, CPT/Inf (2004) 27, CPT/Inf (2006) 38, CPT/Inf (2006) 39, CPT/Inf (2007) 47 և CPT/Inf (2007) 48):

դադարեցնում էր քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը, նույնպես տեղեկատվական վակուումի վախ առաջացրեց:

2008 թվականի մարտի 5-ի նամակով CPT-ին, հղում կատարելով իր կանոնակարգի 30(1) կանոնին<sup>2</sup>, խնդրեց Հայաստանյան իշխանություններին տրամադրել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների հետ կապված ձերբակալվածների ամբողջական ցանկը՝ նշելով այն հաստատությունները, որտեղ նրանք պահվում են և տեղեկատվություն նրանցից յուրաքանչյուրի առողջական վիճակի, ներառյալ՝ հնարավոր վնասվածքների մասին: CPT-ն տեղեկատվություն խնդրեց նաև վերոհիշյալ իրադարձությունների հետևանքով մահացած և նրանց մահվանը հանգեցրած բոլոր վնասվածքների մասին:

4. 2008 թվականի մարտի 11-ի նամակով Հայաստանյան իշխանությունները տրամադրել են պահանջվող տեղեկատվությունը: Այդ նամակի համաձայն՝ 2008 թվականի մարտի 10-ի դրությամբ, մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ ձերբակալվել էին 53 մարդ, որոնք բանտարկվել էին և ևս 16-ը, որոնք դեռևս գտնվում էին ոստիկանությունում: Նշվել է, որ բոլոր ձերբակալվածներն առողջ են և որևէ վնասվածք չունեն: Գլխավոր դատախազության տեղեկատվության համաձայն՝ ձերբակալումը, որպես խափանման միջոց կիրառվել է բացառապես ցույցերի կազմակերպիչների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգը խախտելու համար և այն անձանց նկատմամբ, որոնք գործողություններ են ձեռնարկել իշխանությունը զավթելու ուղղությամբ, ինչպես նաև նրանց նկատմամբ, ովքեր բռնություն են գործադրել իրավապահ մարմինների ներկայացուցիչների նկատմամբ: Բոլորը ձերբակալվել են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական հանցագործություններ կատարելու համար: Բացի դա, նշվում էր նաև, որ 8 մարդ (այդ թվում՝ մեկ ոստիկան) մահացել են 2008 թվականի մարտի 1-ի<sup>3</sup> իրադարձությունների արդյունքում: Ի լրումն տրամադրվել էր նաև 2008 թվականի մարտի 1-2 իրադարձությունների մասին պաշտոնական հաշվետվությունը:

Հերթական տեղեկատվությունը տրամադրվել է 2008 թվականի մարտի 13-ի նամակով՝ ներառյալ մարտի 1-ի իրադարձությունների հետևանքով ձերբակալվածների ցանկը: Այդ ցանկի համաձայն 2008 թվականի մարտի 9-ի դրությամբ ձերբակալվածների ընդհանուր թիվը հասնում էր 73-ի, որոնցից 50-ը պահվում են Նուբարաշենի, 14-ը Երևան-Կենտրոնի, 7-ը Վարդաշենի և 2-ը Վնաձորի բանտերում: Բացի դա, 8 անձ ձերբակալվել էին մինչև մարտի 1-ը (որոնցից երկուսը 2008 թվականի փետրվարի 24-ին՝ իրավապահ մարմինների աշխատակիցներին ընդդիմանալու համար և վեցը՝ փետրվարի 26-ին անօրինական զենք պահելու համար): Բացի դա, նշվում էր, որ զանգվածային անկարգությունների այն մասնակիցները, որոնք ստացել էին մարմնական վնասվածքներ, բժշկական օգնություն են ստացել համապատասխան բժշկական հաստատություններում. այդ տուժածների մասին մանրամասն տեղեկատվությունը կարելի է ձեռք բերել քրեակատարողական հիմնարկներում, որտեղ նրանք ընդունման պահին անցել են պարտադիր բժշկական հետազոտություն: Նշվում էր նաև, որ որևէ անընդունելի մեթոդ չի կիրառվել ձերբակալվածների նկատմամբ նրանց

<sup>2</sup> 30(1) կանոնում նշված է. «Նախքան կոնկրետ այցելության վերաբերյալ որոշում կայացնելը, կոմիտեն կամ, եթե պատշաճ է, բյուրոն կարող է տեղեկություն կամ պարզաբանումներ պահանջել խնդրո առարկա պետությունում տիրող ընդհանուր իրավիճակի, որոշակի վայրի, կամ առանձին դեպքի վերաբերյալ, որի մասին այն տեղեկատվություն է ստացել»:

<sup>3</sup> Ձեկույցը պատրաստելու ընթացքում, 2008թ. մարտի 1-ի անկարգությունների ժամանակ ստացած վնասվածքների հետևանքով մահացածների թիվը հասավ 10-ի:

կալանավորելու ընթացքում, մասնավորապես, նրանից ոչ ոք չի խոշտանգվել կամ որևէ մեկի նկատմամբ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք չի ցուցաբերվել:

5. Հայաստանյան իշխանությունների տրամադրած տեղեկատվությունը չէր բավարարում Կոմիտեի հետաքրքրությունը: Միևնույն ժամանակ CPT-ին շարունակում էր տարբեր աղբյուրներից ստանալ մտահոգիչ զեկույցներ հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալվածների նկատմամբ վերաբերմունքի մասին:

Ելնելով վերոշարադրյալից՝ Կոմիտեն որոշեց, որ պատվիրակությունը պետք է այցելի Հայաստան՝ հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալվածների վիճակի, ինչպես նաև 2008 թվականի մարտի 1-ի ոստիկանության կողմից իրականացված գործողության ընթացքում կիրառված ուժի չափի մասին անմիջական տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով:

6. Այցելության ընթացքում CPT-ի պատվիրակությունը, հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալված անձանց հետ հարցազրույց ունենալու նպատակով, այցելել է ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու հետևյալ վայրերը.

*Քրեակատարողական հիմնարկներ՝*

- Նուբարաշենի
- Վարդաշենի
- Երևան-Կենտրոն

*Ոստիկանական հիմնարկներ՝*

- Երևան քաղաքի ոստիկանական բաժանմունքի մեկուսարան
- Երևանի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
- Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանական բաժանմունք

*Ազգային անվտանգության ծառայության հիմնարկներ՝*

- Ազգային անվտանգության ծառայության Երևանի ժամանակավոր մեկուսարան

7. Այցելության ընթացքում CPT-ի պատվիրակությունը խորհրդակցություններ է ունեցել Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի, Ոստիկանապետի առաջին տեղակալ Արարատ Մահտեսյանի, Գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամազյանի, Դատական բժշկության հանրապետական կենտրոնի տնօրեն Շոբա Վարդանյանի և Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ: Պատվիրակությունը հանդիպել է նաև CPT հետաքրքրությունների շրջանակներում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալվածների շահերը ներկայացնող մի քանի փաստաբանների հետ:

Պետական մարմինների և կազմակերպությունների ցանկը, որոնց հետ այցելության ընթացքում խորհրդակցել է պատվիրակությունը, ներկայացված է սույն զեկույցի թիվ II Հավելվածում:

8. Այցելության ընթացքում Հայաստանի իշխանությունների կողմից ցուցաբերած համագործակցության մակարդակը շատ բարձր էր: Բացի դա, Կմիտեի պատվիրակությանը գոհացնող ընդունելություն ցուցաբերվեց նաև այցելած հաստատությունների աշխատակազմերի կողմից: Այդ հաստատությունները այցելելու առնչությամբ որևէ խոչընդոտ չի հարուցվել և պատվիրակությունը հնարավորություն է ունեցել առանձին գրուցել ազատագրված անձանց հետ, ինչպես նաև կարողացել է ուսումնասիրել անհրաժեշտ փաստաթղթերը՝ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

CPT ցանկանում է շնորհակալություն հայտնել Արդարադատության նախարարի տեղակալ պարոն Նիկոլայ Առուստամյանին՝ Կոմիտեի և Հայաստանյան իշխանությունների միջև կապը պաշտպանող պետական մարմինների կողմից նշանակված պաշտոնյային, պատվիրակությանը ցույց տված աջակցության համար, ինչպես նաև բոլոր այն պաշտոնատար անձանց, ովքեր քայլեր են ձեռնարկել այցելության կայացմանը աջակցելու ուղղությամբ: Ձևը, որով դա արվել է, արժանի է գովեստի, հաշվի առնելով այցելության մասին ծանուցելու կարճ տևողությունը:

9. Նախքան CPT այցելությունը, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համերբերգը իրականացրել էր հատուկ այցելություն Հայաստան. այս այցելության մասին զեկույցը, որը ներառում է մի շարք առաջարկություններ, հրապարակվել է 2008 թվականի մարտի 20-ին<sup>4</sup>: ԵԽ ԱԳՕ-ի մոնիտորինգի խումբը նույնպես այցելել է Հայաստան 2008 թվականի մարտի 29-ից ապրիլի 2-ն ընկած ժամանակահատվածում և հետևաբար արել է Հայաստանյան իշխանություններին ուղղված մի շարք առաջարկություններ: Բացի դա, 2008 թվականի ապրիլի 17-ին ԵԽ Խորհրդարանական վեհաժողովը ընդունեց 1609 (2008) բանաձևը Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին: Սույն զեկույցը կազմելու ընթացքում CPT-ն հաշվի է առել վերը նշված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև Հայաստանյան իշխանությունների արձագանքը դրանց առնչությամբ և տրամադրված նոր տեղեկատվությունը:

---

<sup>4</sup> St'u CommDH(2008)11 փաստաթուղթը:

## II. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. Նախնական դիտողություններ

10. Հայաստանյան իշխանությունների կողմից տրամադրված ցանկին համապատասխան՝ (տես 4-րդ կետը), պատվիրակությունը կազմակերպել է անհատական հարցազրույցներ հետընտրական իրադարձությունների հետ կապված Նուբարաշենի, Վարդաշենի և Երևան-Կենտրոն քրեակատրոդական հիմնարկներում պահվող անձանց մեծամասնության հետ (մոտ՝ 70 մարդ): Հանդիպումներ են կազմակերպել նաև Ազգային անվտանգության ծառայության ժամանակավոր մեկուսարանի և Երևան քաղաքի Ոստիկանության ձերբակալվածների կենտրոնում պահվող ձերբակալված մի քանի անձանց հետ:

Խումբը, որից վերցվել է հարցազրույցը ներառում է ինչպես անձանց, որոնք ձերբակալվել են 2008 թվականի մարտի 1-ի անկարգությունների հետևանքով (մոտավորապես հարցվածների կեսը), այնպես էլ նրանց, որոնք կալանավորվել են ավելի ուշ՝ մարտի 2-ից 15-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև մի քանի մարդկանց հետ, որոնք ձերբակալվել են ընտրություններից հետո, սակայն մինչև մարտի 1-ը:

Մասնավորապես, բոլոր անձինք, որոնք ձերբակալվել են (երկու ամիս նախնական ժամկետով), մեղադրվում են Քրեական օրենսգրքի 225-րդ մասով (զանգվածային անկարգությունների կազմակերպում և մասնակցություն), 300-րդ մասով (պետական իշխանությունը յուրացնելը), 301-րդ մասով (սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը), 316-րդ մասով (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը): Այնուամենայնիվ, պատվիրակությունը հանդիպել է նաև մի քանի անձանց, որոնք մեղադրվում են այլ հանցագործությունների մեջ, այն է՝ 176-րդ մասով (կողոպուտ), 235-րդ մասով (ապօրինի կերպով զենք, ռազմամթեր, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը), 308-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), 334-րդ մասով (հանցագործությունը պարտակելը):

CPT-ի այցելության արդյունքում, անձանց քանակը, որոնք ձերբակալվել և մեղադրվել են հետընտրական իրադարձությունների մեջ ներգրավվելու պատճառով, շարունակում է աճել. Գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2008 թվականի մարտի 17-ի դրությամբ բանտերում պահվում էին 105 մարդ:

11. Հարկ ենք համարում նշել, որ կասկածյալը ոստիկանության կողմից կարող է պահվել կալանքի տակ առավելագույնը 72 ժամ տևողությամբ: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները հստակ ցույց են տալիս որ 72 ժամ տևողությունը սկսվում է հաշվարկվել de facto կալանավորվելու պահից և որ ձերբակալման

մասին արձանագրությունը պետք է կազմվի ձեռքարկված պահից սկսած 3 ժամվա ընթացքում: 72 ժամվա ընթացքում հետաքննությունը վարող մարմինը (այն է՝ ոստիկանության օպերատիվ աշխատակիցը) և/կամ քննիչը պետք է հարցաքննեն մեղադրյալին, իրականացնեն այլ անհրաժեշտ քննչական միջոցառումներ և որոշում կայացնեն քրեական մեղադրանք առաջադրելու մասին: Եթե մեղադրանքն առաջադրվում է, ապա դատավորը որոշում է կայացնում անձի նկատմամբ որևէ խափանման միջոց կիրառելու մասին (օրինակ՝ ձեռքարկել, ազատել գրավի միջոցով, և այլն) կամ ազատ արձակել: Սկզբունքորեն, ձեռքարկված անձը տեղափոխվում է Արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող մինչ-դատական հաստատություն առավելագույնը կալանավորման պահից 72 ժամվա ընթացքում:

Այցելության ընթացքում բացահայտվեց, որ վերոհիշյալ օրենքի դրույթները միշտ չէ, որ պահպանվել են հետընտրական իրադարձությունների հետ կապված ձեռքարկված անձանց նկատմամբ: 2008 թվականի մարտի 1-ին ձեռքարկված անձանցից ոմանք հավաստիացնում են, որ նրանց վերաբերյալ ձեռքարկված արձանագրությունը կազմվել է նույն օրը ուշ երեկոյան կամ նույնիսկ հաջորդ օրը: Բացի դա, պատվիրակության կողմից հարցված անձանցից մի քանիսը նշել են, որ նրանք մինչև վեց օր անկացրել են ոստիկանական տարբեր հաստատություններում, մինչև դատարան ներկայանալը, որը հավանաբար գերազանցում է օրենքով հաստատված ոստիկանությունում պահվելու 72 ժամ տևողությունը: Պատվիրակության հետ հանդիպած անձանցից շատերն անկասկած բանտ են տեղափոխվել շատ ավելի ուշ քան ձեռքարկվելուց հետո սահմանված 72 ժամը (մի դեպքում՝ նույնիսկ ձեռքարկությունից յոթ օր անց):

Վերոհիշյալ հայտարարությունները որոշ դեպքերում նույնիսկ հաստատվել են նաև այցելած հաստատություններում պատվիրակության ուշադրությանը ներկայացված փաստաթղթերով<sup>5</sup>: Որպես օրինակ՝ կարելի է անդրադառնալ հետևյալ գործերին.

- գրառման մաջ, այն անձի վերաբերյալ, որը հայտարարում է, որ ձեռքարկվել է 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան 7-ի մոտակայքում, երբ փորձում էր թողնել Օպերայի հրապարակի տարածքը, նշված է, որ նա ձեռքարկվել է ոստիկանության կողմից 2008 թվականի մարտի 2-ին 3.50 ժամ կեսօրից հետո և ընդունվել է Երևան քաղաքի ոստիկանական բաժանմունքի մեկուսարան 2008թ. մարտի 2-ի երեկոյան 8.10 ժամին: Հարցված անձը դատավորին է ներկայացվել մարտի 6-ին (որը որոշում է կայացրել նրան ձեռքարկելու մասին) և տեղափոխվել է Նուբարաշենի քրեակատարողական հիմարկ 2008թ. մարտի 7-ին.
- մեկ այլ անձի վերաբերյալ, որը հայտարարում է, որ ձեռքարկվել է 2008 թվականի մարտի 1-ին առավոտյան 10-ի մոտակայքում, նշված է, որ նա ոստիկանության կողմից ձեռքարկվել է 2008 թվականի մարտի 1-ին 11.55 ժամին և ընդունվել է

<sup>5</sup> Ոստիկանության Երևանի քաղաքի վարչության Ձեռքարկվածների պահման վայրում, Ոստիկանության Կենտրոն համայնքի բաժնի և Ազգային անվտանգության ծառայության ժամանակավոր պահման վայրի գրանցամատյաններ, Նուբարաշեն և Երևան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկներում պահվող փաստաթղթեր:

Երևան քաղաքի ոստիկանական բաժանմունքի մեկուսարան 2008թ. մարտի 2-ի 3.35 բուպեին: Անձը մնացել է անազատության մեջ մինչև մարտի 5-ը և այնուհետև տեղափոխվել Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկ:

CPT-ին կրկնում է իր առաջարկությունը, որն արել է 2006 թվականի այցելության ժամանակ ներկայացված զեկույցում և կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ ձերբակալության և, մասնավորապես, ոստիկանությունում պահվելու ժամկետների վերաբերյալ իրավական դրույթների կատարումը գործնականում ապահովելու ուղղությամբ:

## 2. Խոշտանգումները և ֆիզիկական վատ վերաբերմունքի այլ ձևերը

12. Գործնականում բոլոր անձինք, որոնք ձերբակալվել են իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից 2008 թվականի մարտի 1-ին, հայտարարում են, որ ձերբակալության ժամանակ նրանց նկատմամբ կիրառվել է ֆիզիկական վատ վերաբերմունք, նույնիսկ երբ նրանք բացարձակ դիմադրություն ցույց չեն տվել: Վատ վերաբերմունքը հիմնականում ենթադրում է մահակի հարվածներ, մարմնին և գլխին բռունցքներով և ոտքով հասցված հարվածներ, գետնին հրելով պառկեցնելն ու ոստիկանական մեքենա քարշ տալը: Որոշ դեպքերում հարվածները շարունակվել են ոստիկանություն տանող ճանապարհի ողջ ընթացում և այնտեղ ժամանելուց հետո: Վատ վերաբերմունքի մասին հայտարարող որոշ անձինք հայտնել են, որ իրավապահ մարմինների աշխատակիցներից ոմանք կրել են դիմակներ և ինքնությունը ճանաչելու համար ոչինչ չեն ունեցել իրենց հագուստի վրա:

Բացի դա, պատվիրակությունը մի քանի հայտարարություններ է ստացել նաև ոստիկանությունում հարցաքննության ժամանակ ֆիզիկական վատ վերաբերմունք ցուցաբերելու առնչությամբ: Վատ վերաբերմունքը նկարագրվել է հիմնականում ապտակների, բռունցքներով և ոտքով հարվածների, մահակներով հարվածների ձևով և ակնհայտորեն կիրառվել է խոստովանություն ձեռք բերելու (մասնավորապես, այն անձանց նկատմամբ, ովքեր կասկածվել են 2008 թվականի մարտի 1-ի անկարգությունների ժամանակ իրավապահ մարմինների դեմ բռնություն գործադրելու մեջ) կամ տեղեկատվություն ստանալու նպատակով այլ անձանց ներգրավելու համար:

Ֆիզիկական վատ վերաբերմունքի մասին որևէ հայտարարություն չի արվել այն անձանց կողմից, որոնք ձերբակալվել են տանը կամ աշխատավայրում: Այս կատեգորիան համարվում է «բարձրաստիճան» ձերբակալվածներ (օրինակ՝ ընդդիմության անդամներ, նախկին պետական պաշտոնյաներ և այլն), որոնք բոլորն էլ նշել են, որ նրանց նկատմամբ ցուցաբերվել է պատշաճ վերաբերմունք և՛ ոստիկանության, և՛ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում անցկացրած ժամանակահատվածին, ապա հարցված անձանցից որևէ մեկը չի բողոքել ֆիզիկական վատ վերաբերմունքից:

13. Որոշ անձինք, ովքեր հայտարարում էին վատ վերաբերմունքի մասին, ստուգվել են պատվիրակության կազմում աշխատող բժիշկ անդամի կողմից, բացահայտելու համար ֆիզիկական այն նշանները, որոնք համապատասխանում են նրանց հայտարարություններին: Այցելած քրեակատարողական հիմնարկներում ներկայացված

բժշկական փաստաթղթերը նույնպես ներառում են տարբեր վնասվածքների նկարագրություններ. հետազոտություններն անցկացվել են բանտի բժշկի կողմից պատվիրակության ժամանումից երկու շաբաթ առաջ: Պատկերավորության համար, նշենք մի քանի դեպքեր՝

- անձը, որին հանդիպել ենք Նուբարաշենի բանտում նշում է, որ նա ձերբակալվել է 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան 7.30 մոտակայքում, Օպերայի հրապարակից մոտ 200 մետր հեռավորության վրա: Ոստիկանության գործողության ընթացքում նա թողել է հրապարակը և քայլել ընկերոջ մեքենայի ուղղությամբ երեք այլ անձանց հետ միասին, երբ երեք ոստիկանական ֆուրգոն հասել են նրանց: Նա հայտարարեց, որ ոստիկանության աշխատակիցները շրջապատել են նրանց, խբել են ռետինե մահակներով և քարշ են տվել դեպի մեքենաները՝ բառերով վիրավորելով նրանց: Ծեծը բացահայտ շարունակվել է նույնիսկ երբ նա արդեն մեքենայում է եղել: Մեքենայի հետևում նստարանին նստել են ոստիկանները, որոնց առջև հատակին պառկել են ձերբակալվածները: Ոստիկանության վատ վերաբերմունքի մասին անձը հայտնել է դատարանում, որտեղ ներկայացել է մարտի 5-ին, սակայն նրա բողոքը անարձագանք է մնացել դատավորի կողմից: Հետագայում, նրա փաստաբանը պահանջել է դատաբժշկական փորձաքննություն, որը մինչ այժմ չի կատարվել: Պատվիրակության բժիշկ անդամի հետազոտության ժամանակ, անձը ցույց տվեց հարվածից առաջացած գլխի այտուցները երկու տեղերում, գլխի ձախ մասում դեպի մազերը տանող հատվածում, ձախ ոտքի միջնամասում, ապաքինվող վնասվածք  $1 \frac{1}{2} \times \frac{1}{2}$  սմ. չափերի՝ ձախ ոտնաթաթի ներսի հատվածում, ապաքինվող կապտուկ և վնասվածք  $2 \times 1$  սմ. չափի աջ ոտնաթաթի մաշկի վրա, միջին և ներքին երրորդ ոսկրի միջև տարածվող վնասվածք 5 սմ. երկարությամբ և 2-3 սմ. լայնությամբ:
- մեկ այլ անձ, որը հարցվել է Նուբարաշենի բանտում, նշեց, որ նա ձերբակալվել է 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան 8-ի մոտակայքում: Նա փախչում էր Օպերայի հրապարակից, որտեղ անցկացրել էր նախորդ գիշերը, երբ մահակով հանկարծակի հարված է ստացել հետևից, որի արդյունքում ընկել է և մահակով բազմաթիվ հարվածներ է ստացել գլխին և ոտքերին: Կորցրել է գիտակցությունը, որը վերագտել է ոստիկանական մեքենա տեղափոխվելիս: Անձը տեղափոխվել է Կենտրոն ոստիկանության բաժին, որտեղ անցկացրել է երեք օր, այդ ընթացքում տեղափոխվելով հիվանդանոց բժշկական օգնություն ստանալու նպատակով: Նուբարաշենի բանտ նրա ժամանման օրից՝ մարտի 7-ից, նա բողոքել է բանտի բժշկին ոստիկանության կողմից ծեծվելու մասին և դատական բժիշկը նրան զննել է մարտի 9-ին: CPT պատվիրակության բժիշկ անդամի կողմից ստուգման ժամանակ, անձը ցույց է տվել  $2 \times 2$  սմ. կեղևով փակվող վերքը ձախ ոտնաթաթի միջնամասում: Նա նաև վիրակապ ուներ գլխին (որը պատվիրակության անդամը նախընտրեց չհանել) և նշեց, որ դեռ ցավեր է զգում շարժվելիս կամ գլխին ձեռք տալիս:
- Վարդաշենի բանտում հարցված անձը նշեց, որ 2008 թվականի մարտի 4-ին ներկայացել է ոստիկանական բաժանմունք, քանի որ ծանուցվել էր այդ մասին: Մոտ մեկ ժամ անց նա տարվել է երկրորդ ոստիկանական բաժանմունք և այնտեղից դատախազություն, որտեղ հայտարարում է, որ իր հանդեպ ցուցաբերվել է վատ վերաբերմունք մի քանի քննիչների կողմից, որոնք հրել են նրան գետնին՝ ծնկի իջած դիրքում երեսով դեպի պատի անկյունը, հրամայել են նրան ձեռքերը պահել հետևում և ոտքերով հարվածել են նրան երիկամների և գլխի հետևի մասին: Նրան քննիչների կողմից բացահայտ կերպով ցույց է տրվել նկար և ասվել է, որ նրանք ծեծում են իրեն, որովհետև նա մարտի 1-ին խբել է ոստիկանության աշխատակցին: Վատ վերաբերմունքը շարունակվել է նաև հետևյալ օրը, երբ ոստիկանը խբել է նրա աչքին,

ասելով, որ նա այն մարդն է, ում նա ծեծել է: Անձը նշել է, որ ծեծի հետևանքով նա տառապել է ուժեղ գլխացավերից և երկու օր շարունակ փսխել է: Հետազոտության ժամանակ նա ցույց է տվել 1 սմ. չափով թարմ սպին աջ ակնակապիճը շրջապատող 1 ½ սմ. այտուցով:

14. Այցելության ժամանակ հավաքված տեղեկատվությունից ելնելով, CPT-ին կոչ է անում Հայաստանյան իշխանություններին պարզաբանել իրավապահ մարմինների բոլոր աշխատակիցներին, որ արգելանքի տակ գտնվող անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքը անօրինական է և խստորեն կայատժվի՝ մեղավորներին ենթարկելով քրեական պատասխանատվության: Իրավապահ մարմինների աշխատակիցներին պետք է անհրաժեշտ միջոցներով պարբերաբար հիշեցվի, որ ձերբակալման ընթացքում չպետք է գործադրվի առավել ուժ, քան միայն անհրաժեշտ է, և որ անձի ձերբակալումից և նրա նկատմամբ հսկողություն հաստատելուց հետո, նրանց ծեծի ենթարկելու համար որևէ արդարացում չի կարող լինել:

Ինչ վերաբերում է 13-րդ կետում նշված երրորդ անձին<sup>6</sup>, ապա CPT-ին խորհուրդ է տալիս Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ ոստիկանության աշխատակիցների կողմից նրա նկատմամբ վատ վերաբերմունքի փաստերն ուսումնասիրելու համար: Կոմիտեն կցանկանար տեղեկացված լինել այդ հետաքննության արդյունքների մասին:

15. Նախորդ այցելությունների վերաբերյալ ներկայացված զեկույցներում, CPT-ին շեշտել է այն անհրաժեշտության մասին, որ դատավորները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն այն դեպքում, երբ նշաններ կան, որ ոստիկանության կողմից վատ վերաբերմունք է ցուցաբերվել և, որ ոստիկանության աշխատակիցների կողմից վատ վերաբերմունք ցույցաբերելու մասին բոլոր բողոքները ամենայն ուշադրությամբ ուսումնասիրվեն իրավասու մարմինների կողմից և անհրաժեշտության դեպքում կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ<sup>7</sup>:

2006 թվականի այցելության վերաբերյալ զեկույցի մասին իրենց պատասխաններում Հայաստանյան իշխանությունները հավաստիացրել են, որ դատավորները պարտավոր են սկսել քրեական հետաքննություն այն դեպքում, երբ դատարան ներկայացած անձը վկայություն է տալիս այն մասին, որ նա ոստիկանության կողմից ենթարկվել բռնության: Կոմիտեն առաջարկում է քննարկել դատավորների դերը՝ դատավարական մարմինների կողմից նման գործերին ընթացք տալու և այս պարտավորության մասին դատավորներին հիշեցնելու առումով: Նույնիսկ վատ վերաբերմունքի ենթարկվելու հայտարարության բացակայության դեպքում, դատավորը պարտավոր է պահանջել դատաբժշկական քննություն, երբ այլ հիմքեր կան ենթադրելու, որ անձի նատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել (օրինակ՝ տեսանելի վնասվածքներ, անձի անվերապահ ենթարկվածությունը կամ վարքը):

<sup>6</sup> Համաձայն Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3 պարբերության՝ խնդրո առարկա անձի անունը հանվել է: Հայաստանի կառավարության պատասխանում նրան հղում է կատարվում որպես «Ա»:

<sup>7</sup> Տե՛ս CPT/Inf (2007) 47-ի 17-րդ և 18-րդ պարբերությունները:

Կոմիտեն ցանկանում է տեղեկատվություն ստանալ նաև հետընտրական իրադարձությունների հետ կապված ձեռքարկված անձանց՝ ոստիկանության աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ ներկայացված դիմում-բողոքների թվի, դրանց արդյունքում հարուցված կարգապահական տույժերի և/կամ սկսված քրեական վարույթների քանակի և կիրառված ցանկացած պատժամիջոցների մասին:

16. 2006 թվականի այցելության մասին զեկույցի առնչությամբ ներկայացված պատասխաններում իշխանությունները նշել են, որ ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ դիմում-բողոքների գրանցման կենտրոնացված համակարգը գտնվում է ստեղծման փուլում: CPT-ն ցանկանում է տեղեկանալ, թե երբ պիտի համակարգը սկսի գործել: Կոմիտեն նաև կրկնում է իր խնդրանքը Ոստիկանության կարգապահական նոր կանոնադիրքը տրամադրելու մասին:

17. Այցելության արդյունքում CPT-ի պատվիրակությունը արդյունավետ զրույց ունեցավ Դատական բժշկության հանրապետական կենտրոնի տնօրեն Շոթա Վարդանյանի հետ: Այս կապակցությամբ պատվիրակությանը տրամադրվեց 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների արդյունքում տուժած անձանց դատաբժշկական հետազոտության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Տեղեկատվության համաձայն կլինիկական հետազոտություն է իրականացվել 38 քաղաքացիների<sup>8</sup> (որոնցից 14-ը ձեռքարկված), 128 ոստիկանության աշխատակիցների<sup>9</sup> և 15 ոստիկանության զորքերի ծառայողների<sup>10</sup> նկատմամբ: Քառասունչորս պահանջված բժշկական հետազոտություններ դեռևս չեն իրականացվել (այս թիվը ներառում է 17 քաղաքացիների, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների): Քաղաքացիներին թույլատրված է այցելել դատական բժշկության կենտրոն ուղղակիորեն, բայց նրանց ինքնության և հետազոտության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ուղարկվի իրավապահ մարմիններին. որևէ քաղաքացի ինքնուրույն չի օգտվել այս հնարավորությունից:

Պատվիրակությանը տրամադրվել է նաև 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ ստացած վնասվածքների արդյունքում մահացած 8 անձանց<sup>11</sup> դատաբժշկական հերձման նյութերը (ներառյալ նկարները): Դրանք ներառել են հետևյալը.

- ոստիկանության մեկ սպա, որը մահացել է պայթուցիկ սարքից՝ օրինակ նոնակից ստացած բազմաթիվ վնասվածքներից առաջացած արյունազեղումից.
- երկու քաղաքացի, որոնցից յուրաքանչյուրը սպանվել է հրազենից ստացված վնասվածքից: Յուրաքանչյուր դեպքում 9 մմ. գնդակ է դուրս բերվել

<sup>8</sup> Վեց քաղաքացիներ էին վիրավորվել հրազենից, 3-ը՝ պայթուցիկ սարքից, 28-ը՝ բուք գործիքից, 1-ը՝ ոչ մի վնասվածք չունեին:

<sup>9</sup> Ոստիկանության մեկ աշխատակից հրազենային վնասվածք էր ստացել, 28-ը՝ պայթուցիկ սարքերից, 84-ը՝ բուք գործիքից, 6-ը՝ գազից, 4-ը՝ ոչ մի տեսանելի վնասվածք չունեին, իսկ 5-ը՝ բուք գործիքից շատ թեթև վնասվածքներ:

<sup>10</sup> Հինգը վնասվածքներ էին ստացել պայթյունի հետևանքով, 6-ը՝ բուք գործիքից և 4-ը՝ գազային՝ «Չերյոմուշկայի» օգտագործման հետևանքով, աչքերի և կոկորդի շրջանում:

<sup>11</sup> Չոհվածների ընդհանուր թիվը կազմեց 10 մարդ (երկու ոստիկանության աշխատակից և 8 քաղաքացի):

մարիններից: Դատական փորձագետները եզրակացրել են, որ դրանք արձակվել են Մակարով տեսակի 9մմ. շրջագծով ատրճանակներից.

- երկու քաղաքացիներ, որոնցից յուրաքանչյուրը մահացել է հրագենից ստացված վնասվածքներից, որոնք պատճառվել էին ավտոտնատ հրագենից արձակված գնդակներից: Մի դեպքում մարմնից դուրս էր բերվել հրացանից արձակված չվնասված Մպիցեր տեսակի 5.45 մմ. գնդակ: Մյուս դեպքում գնդակը դուրս էր եկել մարմնից և այդ պատճառով գնդակի որևէ մաս մարմնից դուրս չէր բերվել.
- երկու քաղաքացիներ, որոնցից յուրաքանչյուրը սպանվել է գլխի հետնամասում ստացված վնասվածքից՝ մի դեպքում գանգոսկրի 2.8 X 2.5 սմ. չափով կոտրվածքից, մյուսում՝ 2.7 X 2.5 սմ. չափով: Վնասվածքների տիպը վկայում է այն մասին, որ դրանք, օրինակ, առաջացել են անմիջապես գլխին մոտ հեռավորությունից արձակված այսպես կոչված «ռետինե գնդակներից» կամ արցունքաբեր գազի կանխատրով հարվածից:
- մեկ քաղաքացի տուժել է ցածր արագության հրագենից կամ բեկորային վնասվածքից՝ նռնակից կամ նման այլ հրագենից ստացված վնասվածքից:

18. CPT-ի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Ոստիկանության առաջին տեղակալը տվել է 2008 թվականի մարտի 1-ի ոստիկանության գործողությունների հաշվետվությունը: Նրա ասածի համաձայն՝ ոստիկանությունը օպերատիվ տեղեկատվություն էր ստացել Օպերայի հրապարակում պահվող զենքի մասին: Ոստիկանության ղեկավարությունը որոշել է մտնել հրապարակ մարտի 1-ի վաղ առավոտյան և առգրավել զենքը. 25 անգն ոստիկաններ ուղարկվել են առաջադրանքը կատարելու: Այնուամենայնիվ, հրապարակում հավաքված մարդիկ ստացված տեղեկատվության համաձայն ազդեցիկ կերպով են արձագանքել՝ օգտագործելով մետաղյա ձողեր և ոստիկանության դեմ օգտագործելու նպատակով պատրաստված այլ սարքեր: Այնուհետև, որոշում է կայացվել ուղարկել հատուկ ստորաբաժանում՝ զինված մահակներով և վահաններով (մոտ 800 – 900 մարդ) շրջապատելու տարածքը: Նրանց հրամայվել է մաքրել հրապարակը մարդկանցից և ստացված տեղեկատվության համաձայն գտնվել են մի քանի թաքցրած զենքեր (ներառյալ 3 ատրճանակ, 15 նռնակներ և ռազմամթերք):

Նույն օրն ավելի ուշ, ցուցարարներն սկսել են հավաքվել Ֆրանսիական դեսպանատան շուրջը, սարքել բարիկադներ, փակել փողոցները և կոտրել մեքենաները: Ոստիկանությունը որոշել է փակել մուտքը դեպի Հանրապետության հրապարակ և այնտեղ են ուղարկվել ոստիկանական ստորաբաժանումներ: Պատվիրակությունը տեղեկացվեց, որ արձակվել է հրագենի օգտագործումն արգելող հրաման<sup>12</sup> և միայն մեկ ստորաբաժանում է զինված եղել «հատուկ միջոցներով»: Ինչ վերաբերում է ցուցարարներին, ապա նրանք օգտագործել են հրագեն, նռնակներ և ինքնաշեն զենքեր՝ ճեղքելու համար ոստիկանների շարքերը: Ուշ երեկոյան ոստիկանության զորքերի հատուկ ստորաբաժանում է ուղարկվել իրավիճակը վերահսկելու համար օգնելու նպատակով:

Ոստիկանության առաջին տեղակալը նշեց, որ գործողությունն ամբողջությամբ ձեռնարկել է ոստիկանությունը և միայն ոստիկանական ստորաբաժանումներն են մասնակցել դրան (ներառյալ ոստիկանության զորքերը և Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության հատուկ նշանակության ստորաբաժանումը):

<sup>12</sup> Մեկ վարչության պետ ակնհայտորեն մոռացել է թողնել իր զենքը, և զենքը վերցվել է իր վրա հարձակված ցուցարարների կողմից:

CPT-ն ցանկանում է տեղեկանալ իրավապահ մարմինների կողմից 2008 թվականի մարտի 1-ի գործողությունների ժամանակ օգտագործված «հատուկ միջոցների» կոնկրետ տեսակների մասին: Կոմիտեն ցանկանում է իմանալ, մասնավորապես, թե արդյոք իրավապահներին բաժանվել են ռետինե զնդակներ, և եթե այո, ապա որքան ռետինե զնդակ է արձակվել հրազեններից գործողության ընթացքում: CPT-ին կցանկանար նաև տեղեկատվություն ստանալ Հայաստանում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ռետինե զնդակներ օգտագործելու համար կիրառվող օրենսդրության, ինչպես նաև պաշտպանության այդպիսի միջոց օգտագործելու հետ կապված նրանց ստացած հրահանգների և ուսուցման վերաբերյալ:

19. 2004 թվականի ապրիլին իր այցելության մասին զեկույցում (որն ուսումնասիրում էր 2004 ապրիլի 12-13-ի գիշերվա ընթացքում ցույցը ցրելու նպատակով ոստիկանության ներխուժման արդյունքում ձերբակալված անձանց նկատմամբ վերաբերմունքը) CPT-ն առաջարկել էր Հայաստանյան իշխանություններին ոստիկանության համար մշակել հատուկ ուսումնական ծրագիր և ապահովել համապատասխան նախապատրաստական միջազատումներ ամբոխի նկատմամբ հսկողություն իրականացնելու գործողությունների իրականացման նպատակով: Այդպիսի ուսուցման ընթացքում պետք է պարզաբանվի, որ չպետք է կիրառվի որևէ ուժ, որը խիստ անհրաժեշտ է կիրառել: Բացի դա, անմիջապես այն բանից հետո, երբ ձերբակալված անձինք վերցված են հսկողության տակ, չի կարող այլևս լինել որևէ արդարացում նրանց ծեծելու համար: Կոմիտեն նշում է, որ ուսուցումը պետք է լրացվի դրան հետևող դերքիֆինգներով՝ ճշգրիտ պլանավորման, գործողությունների նկատմամբ ուղղակի հսկողության և դրանց պատշաճ կազմակերպման մասին:

2008 թվականի մարտի այցելության ժամանակ հայտնաբերված փաստերի առնչությամբ CPT-ին կրկնում է վերոհիշյալ առաջարկությունները:

20. Գլխավոր դատախազի տեղակալի հետ հանդիման ժամանակ պատվիրակությունը տեղեկացվեց, որ բացի Դատական բժշկության հանրապետական կենտրոնի իրականացրած հետազոտություններից, բանտերի բոլոր ղեկավարներին հրահանգվել է հատուկ ուշադրություն դարձնել 2008 թվականի մարտի 1-ի անկարգությունների հետ կապված նոր բանտարկյալների բոլոր վնասվածքները գրանցելու վրա: Նշվել է, որ հետազոտված ձերբակալված անձանց բոլոր վնասվածքները մասսայական անկարգություններին իրենց մասնակցության և շատ քիչ դեպքերում, ձերբակալության հետևանք են եղել:

Այնուհետև, պատվիրակությունը տեղեկացվել է, որ Գլխավոր դատախազությունը ստեղծել է Հատուկ հանձնաժողով (կազմված մոտ 50 քննիչներից), որը կոչված է ուսումնասիրել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունները: Ուսումնասիրությունները, որոնք ղեկավարվում են Գլխավոր դատախազության կողմից, պետք է ներառեն ոստիկանության և քաղաքացիների կողմից իրականացված բռնությունների բոլոր ասպեկտները: Իրականացվել են ծառայողական քննություններ (օրինակ՝ ոստիկանության ներքին անվտանգության ծառայության կողմից) սահմանելու համար ոստիկանների անձնական պատասխանատվություն և այդպիսի ծառայողական քննությունների արդյունքները պետք է ներառվեն ամբողջական հետաքննության մեջ՝ հասկանալու համար, թե արդյոք ուժի կիրառումն արդարացված էր: Մինչև այդ պահը, շատ հարցեր կսպասեն իրենց պատասխաններին:

21. Ինչպես նշվել է CPT-ի պատվիրակության կողմից իր այցելության վերջում Հայաստանի պաշտոնատար անձանց հետ հանդիպման ընթացքում, կարևոր է 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ուսումնասիրության ընթացքում ապահովել արդյունավետ հետաքննության չափորոշիչներին դրանց համապատասխանությունը:

Առաջին հերթին, դա իրականացնող պատասխանատու անձինք պետք է անկախ լինեն իրադարձությունների մեջ ներգրավվածներից:

Երկրորդ, հետաքննությունը պետք է իրականացվի մանրակրկիտ և հանգամանալից: Այն պետք է հնարավոր դարձնի ոստիկանության կողմից ուժի կիրառման օրինականությունը որոշելը, ցուցարարների կողմից ներկայացրած վտանգի աստիճանին կիրառված ուժի անխուսափելիությունն ու համապատասխանությունը, ինչպես և ինչու են սպանվել մահացած և այլ լուրջ վիրավորված անձինք և որքանով է վկայությունն աջակցում ցանկացած անհատի դեմ քրեական մեղադրանք ներկայացնելուն: Պահանջվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը ապահովելու վկաների անվտանգությունը դժբախտ պատահարներից, ներառյալ գոհերի, կասկածյալների և ականատեսների հետ հարցազրույցները, դատաբժշկական ապացույցների հավաքումը, կլինիկական տվյալների օբյեկտիվ վերլուծությունը և օգտագործված զենքի նույնականացումը: Այս ենթատեքստում CPT-ին իր մտահոգությունն է հայտնում իրավապահ մարմինների դիմակավորված աշխատակիցների կողմից ձեռքակալություններ իրականացնելու փաստի կապակցությամբ. սա իրականում բարդացնում է պոտենցիալ մեղավորների ինքնության ճանաչումը: Կոմիտեն գտնում է, որ միայն բացառիկ դեպքերը կարող են արդարացնել իրենց պարտականությունները կատարելիս իրավապահ մարմինների աշխատակիցների ինքնությունը թաքցնելը: Նման դեպքերում պետք է ապահովվեն բոլոր անհրաժեշտ պայմանները այդ աշխատակիցների ինքնությունը հետագայում բացահայտելու և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրենց արարքների համար պատասխանատվության ենթարկելու համար (օրինակ՝ համազգեստի վրա հատակ երևացող համար օգտագործելով):

Աքսիոմատիկ է նաև, որ հետաքննությունը պետք է իրականացվի արագ և պատճառաբանված շտապողականության ձևով:

Ի լրումն վերոշարադրյալ չափորոշիչների՝ հետաքննության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նաև հետաքննության ընթացքի կամ դրա արդյունքների հասարակական ուսումնասիրության բավարար էլեմենտ, ներառյալ հանրությանը իրականացվող հետաքննության մասին պարբերաբար տեղեկատվություն տրամադրելը, հաշվետու լինելը՝ ինչպես թեորիապես, այնպես էլ գործնականում: Տվյալ դեպքում, հաշվի առելով 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների լրջության աստիճանը, հասարակական քննության չափը պետք է լինի դրան համապատասխան:

CPT-ին առաջարկում է 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների հետաքննությունն իրականացնել վերոհիշյալ չափորոշիչներին համապատասխան: Կոմիտեն կցանականար տեղեկանալ հետաքննության արդյունքներին և այդ առնչությամբ ձեռնարկված համապատասխան միջոցներին:

Հետաքննության արդյունքները պետք է օգտագործվեն որպես ուղեցույց հետագա ոստիկանական գործողությունների համար՝ ամբոխի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավիճակներում ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների ծրագրման, ուսուցման և տակտիկայի առումով:

### 3. Երաշխիքներ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքից

22. 2006 թվականի այցելության մասին զեկույցում, CPT մանրամասն ուսումնասիրել է վատ վերաբերմունքի դեմ ֆորմալ երաշխիքները, որոնք կիրառվում են ոստիկանության կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ (այն է՝ ձերբակալման պատճառների մասին տեղեկացնելու իրավունքը, փաստաբանի և բժշկի իրավունքը) և մի շարք առաջարկություններ է արել՝ այդ երաշխիքներն ամրապնդելու նպատակով: Հայաստանյան իշխանությունները համապատասխանաբար ձեռնարկել են որոշակի օրենսդրական և կազմակերպական միջոցներ՝ նպատակ ունենալով երաշխավորել վերը նշված երաշխիքների կիրառությունը մարդուն ազատությունից զրկելու հենց սկզբից<sup>13</sup>: Այնուամենայնիվ, 2008 թվականի մարտի այցելության ժամանակ պարզ դարձավ, որ երբ խոսքը վերաբերում է գործնականում այդ իրավունքների պաշտպանությանը, իրադրությունը թողնում է ցանկալ ավելին:
23. Ինչ վերաբերում է ձերբակալված անձի՝ իր հարազատին կամ երրորդ կողմին իրեն արգելանքի տակ վերցնելու մասին արագ տեղեկացնելուն, միայն մի քանի անձինք, որոնց հետ զրուցել է պատվիրակությունը նշեցին, որ նրանք կարողացել են իրականում այդպես վարվել ոստիկանություն բերվելուց անմիջապես հետո: Նրանք մեծամասամբ «բարձրաստիճան» ձերբակալվածներն էին, որոնք կամ ձերբակալվել էին տանը կամ ծանուցվել էին ոստիկանություն ներկայանալու մասին: Ինչ վերաբերում է մյուսներին, որոշ դեպքերում ոստիկաններն են զանգահարել իրենց ընտանիքներին նույն օրն ավելի ուշ (վկա է եղել այն փաստին, որ ընտանիքի անդամները սնունդ են բերել ոստիկանություն): Այդուհանդերձ, բազմաթիվ անձինք նշել են, որ նրաք զրկված են եղել հարազատներին իրենց ձերբակալման մասին հայտնելու հիմարավորությունից մի քանի օր շարունակ և նրանք հետո իմացել են, որ հարազատները փնտրել են իրենց: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ 2008 թվականի մարտի 1-ին հաջորդող օրերին լուրեր էին պտտտվում «անհետացած» մարդկանց մասին: Այսօրինակ լուրերի տարածման պատճառը, անշուշտ, մասամբ նաև ձերբակալման մասին սխտեմատիկ ծանուցման բացակայությունն էր:

**CPT-ն առաջարկում է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որպեսզի ձերբակալված բոլոր անձինք իրենց ազատության սահմանափակման պահից սկսած արդյունավետորեն օգտվեն ձերբակալման մասին տեղեկացնելու իրավունքից: Այդ իրավունքից օգտվելը պետք է գրավոր արձանագրվի մատյանում կամ այլ կերպ:**

24. Փաստաբան ունենալու իրավունքի վերաբերյալ, հարցումներից երևաց, որ միայն «բարձրաստիճան» ձերբակալվածներին է թույլատրվել կապվել փաստաբանի հետ իրենց ազատության սահմանափակման հենց սկզբից: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա փաստաբանի ծառայությունից օգտվելը մեծամասամբ հետաձգվել է (մեկից երեք օր): Այս կապակցությամբ, պաշտպանները պատվիրակության հետ հանդիպման ժամանակ հայտնեցին իրենց հաճախորդների հետ հանդիպելու խնդիրների մասին (նրանց գտնվելու

<sup>13</sup> Տե՛ս 2006թ.-ին CPT-ի կատարած այցի վերաբերյալ զեկույցին Հայաստանի կառավարության պատասխանը (CPT/Inf (2007) 48):

վայրի մասին տեղեկացված չլինելու և քննիչների կողմից իրենց հաճխորդներին հանդիպելու թույլտվության ձգձգումների պատճառներով):

Այնուհետև, որոշ անձինք նշել են, որ նրանք ինքներն են ընտրել փաստաբան չունենալու տարբերակը, որովհետև նրանք վստահ չեն, որ *ex officio* փաստաբանները անկախ են ոստիկանությունից և դատախազությունից:

CPT-ն կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ապահովել ազատությունից զրկված անձանց կողմից փաստաբանի օգնությունից արդյունավետորեն օգտվելու իրավունքը՝ ոստիկանության կողմից նրանց ազատության սահմանափակման պահից: Այս կապակցությամբ քննիչներին պետք է տրվեն համապատասխան հրահանգներ: Բացի դա, կոմիտեն առաջարկում է Փաստաբանական պալատի հետ համագործակցությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ իրավաբանական օգնության տրամադրման համակարգը իրապես արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ոստիկանությունից և դատախազությունից *ex officio* փաստաբանների անկախությունն ապահովելու ուղղությամբ:

25. Բժշկի հետ հանդիպելու իրավունքի վերաբերյալ, բազմաթիվ ձերբակալվածներ, որոնք վնասվածքներ էին ստացել 2008 թվականի մարտի 1-ի անկարգությունների հետևանքով, հայտնել են, որ նրանց մերժվել է բժշկական օգնությունը մի քանի օր շարունակ և նրանք առաջին անգամ բժիշկի հետ հանդիպել են Երևան քաղաքի ոստիկանության մեկուսարան ընդունվելուց կամ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուց հետո: Որոշ դեպքերում, այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ հարցված անձինք հանդիպել են բժշկի հետ ոստիկանությունում եղած ժամանակ և ստացել են իրենց վնասվածքների հետ կապված բժշկական օգնություն (մասնավորապես, տեղափոխվել են հիվանդանոց):

Մի քանար նշեցին, որ նրանք հետազոտվել են դատական բժշկի կողմից, այդուհանդերձ, նրանց դեռևս չեն տրամադրվել հետազոտության արդյունքները: Այս կապակցությամբ CPT-ն նշում է, որ ազատագրված անձինք այժմ իրավունք ունեն իրենց փաստաբանների միջոցով դատաբժշկական հետազոտություն պահանջել: **Կոմիտեն կցանկանար իմանալ, կարող է արդյոք այդպիսի պահանջով անմիջականորեն հանդես գալ ոստիկանության կողմից ձերբակալված անձը:**

CPT-ին կրկնում է 2006 այցելության մասին զեկույցի 24-րդ կետում արված առաջարկությունը, այն մասին, որ Հայաստանյան իշխանությունները քայլեր ձեռնարկեն ձերբակալված անձանց բժշկական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ դրույթների գործնական կիրառման արդյունավետության ապահովման ուղղությամբ: Գործող դրույթները պետք է լրացվեն այնպես, որ հաստակ լինի, որ՝

- բժշկական օգնությունը պետք է մատչելի լինի ազատության *de facto* սահմանափակման պահից (այլ ոչ թե միայն այն պահից, երբ անձը տեղափոխվել է ոստիկանության մեկուսարան)։
- բոլոր բժշկական զննությունները պետք է իրականացվեն ոստիկանության աշխատակիցների լսողության, իսկ բժշկի կողմից կոնկրետ իրավիճակում հակառակը չպահանջելու դեպքում՝ նաև տեսողության սահմաններից դուրս։
- յուրաքանչյուր բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև դրա հետ կապված ձերբակալված անձի կողմից կատարված հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է պատշաճ կերպով արձանագրվեն բժշկի կողմից և մատչելի լինեն ձերբակալված անձի ու նրա փաստաբանի համար։
- այդուհանդերձ, բժշկի կողմից ցանկացած այնպիսի վնասվածք արձանագրելու դեպքում, որը համապատասխանում է վատ վերաբերմունքի վերաբերյալ

**ձերբակալված անձի պնդումների հետ, համապատասխան արձանագրությունները պետք է պարբերաբար ներկայացվեն համապատասխան դատախազի ուշադրությանը:**

26. 2008 թվականի այցելության ընթացքում, պատվիրակությունը ստացել է Ոստիկանապետի 2007 թվականի սեպտեմբերի 17-ի հրամանի պատճենը՝ ոստիկանության կողմից ձերբակալվածներին իրենց իրավունքների մասին ավելի լավ տեղեկացնելու մասին: Այս հրամանի համաձայն՝ բոլոր ձերբակալվածներին պետք է տրվի իրենց իրավունքների մասին տեղեկատվական ձև: Չևը, ի թիվս այլոց, բովանդակում է հետևյալ իրավունքները՝ տեղեկացնել ցանկացած անձի ձերբակալման փաստի մասին ոստիկանության բաժանմունք ժամանելուց 3 ժամվա ընթացքում, ունենալ փաստաբանի և իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, տալ բացատրություններ փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվել բացատրություններ տալուց, պահանջել կիրառել այս իրավունքները և անհրաժեշտության դեպքում հետազոտվել բժշկի կողմից: Չևը ձերբակալված անձի կողմից ստորագրվելու տեղ ունի, որով հաստատվում է այդ իրավունքների մասին տեղեկացվելու փաստը:

CPT –ն ողջունում է այս ձևի բովանդակային մասը: Սակայն, պատվիրակության կողմից հարցված որևէ անձ չի նշել այդպիսի օրինակ ստանալու մասին: Ինչ վերաբերում է իրավունքների մասին բանավոր տեղեկացմանը, ապա պատվիրակության կողմից հարցված անձանց մեծամասնության համար չի ապահովվել այս իրավունքը ոստիկանությունում պահվելու ժամանակ:

**CPT-ն առաջարկում է Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել հետագա քայլերը՝ բոլոր ձերբակալված անձանց իրենց ազատության սահմանափակման առաջին իսկ պահից իրենց իրավունքների մասին պարբերաբար բանավոր տեղեկացվելու իրավունքը երաշխավորելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է տեղեկացվող իրավունքների ձևին, ապա այն պետք է սխտեմատիկ կերպով տրվի բոլոր ձերբակալված անձանց, վերջիններիս ոստիկանություն բերելու պահից և պետք է գրված լինի անհրաժեշտ մատչելի լեզուներով:**

27. Ազատագրկման վայրերի ստուգումը անկախ մարմնի կողմից կարող է կարևոր ներդրում հանդիսանալ ազատագրված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքը կանխարգելելու ուղղությամբ: Այս կապակցությամբ պատիրակությունը տղեկացվել է, որ 2008 թվականի մարտի 3-ին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցները, ինչպես նաև հասարակության ներկայացուցիչներից կազմված մոնիտորինգային խմբի անդամներն այցելել են այն ոստիկանական բաժիններ և քրեակատարողական հիմնարկներ, որտեղ պահվում են հետընտրական իրադարձությունների հետ կապված ազատագրված անձինք: Այնուամենայնիվ, պազվեց, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներին սկզբում չի թույլատրվել գրուցել այն անձանց հետ, ովքեր ենթարկվել են արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումների: CPT-ն կցանկանար այս առնչությամբ ստանալ Հայաստանյան իշխանությունների մեկնաբանությունները:

#### **4. Ազատագրվածներին պահելու պայմանները**

28. 2007 թվականի մարտին կատարած այցի ընթացքում CPT պատվիրակությունն առաջին անգամ այցելել էր Ազգային անվտանգության ծառայության Երևան քաղաքի ժամանակավոր մեկուսարան: Դա նոր կառուցված շենք էր քաղաքի կենտրոնում

տեղակայված Ազգային անվտանգության ծառայության տարածքում և գործում էր 2007 թվականի հուլիսից: Կառույցը նախատեսված էր ձերբակալվածներին մինչև 72 ժամ պահելու համար և բաղկացած էր երկու խցերից՝ երկտեղանոց խցի չափերն էին մոտ 7 քառ.մ. և չորստեղանոց խուցը, որի չափերն էին մոտ 17 քառ. մ.: Խցերը բնական լույսի, համապատասխան արհեստական լուսավորության և օդափոխման լավ հնարավորություն ունեին և մաքուր էին: Կահավորումը բաղկացած էր մահճակալներից, մեկ սեղանից, աթոռակներից, լվացարանից և երկտեղանոց գուգարանից: Այնուհետև, կար նաև փոքրիկ զբոսավայր, փաստաբանի հետ հանդիպման սենյակ, խոհանոց սննդի և բաշխման համար և լողասենյակ:

Անփոփելիով ասենք, որ Ազգային անվտանգության ծառայության Երևան քաղաքի ժամանակավոր մեկուսարանի պայմանները բավարար էին 72 ժամ ձերբակալության համար, անուամենայնիվ, **7 քառ. մ. խուցը նպատակահարմար է օգտագործել որպես մեկտեղանոց:**

29. Ինչ վերաբերում է ոստիկանական հաստատություններին, ապա Երևան քաղաքի ոստիկանական բաժանմունքի մեկուսարանը ընդհանուր առմամբ չէր փոխվել CPT-ի 2006 թվականի այցելությունից հետո:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի Գլխավոր վարչությունը Երևանում չունի ձերբակալվածներին պահելու որևէ հաստատություն՝ դրա փոքր խցերը գործածությունից հանելու մասին Ոստիկանապետի թիվ 5 հրամանի համաձայն: Ինչ վերաբերում է Երևանի Կենտրոն համայնքի Ոստիկանության բաժանմունքին, ապա այն ունի 3 ժամ տևողությամբ պահելու համար նախատեսված երեք փոքրիկ խուց:

Հարկ է նշել, որ պատվիրակության կողմից հարցված բազմաթիվ անձինք հայտարարել են, որ նրանք մի քանի գիշեր են անցկացրել տարբեր ոստիկանական բաժանմունքներում, որոնց չի տրամադրվել նույնիսկ ներքնակ և ծածկոց: Ինչ վերաբերում է սննդին, ապա դա ամենայն հավանականությամբ ապահովվել է ձերբակալված անձանց ընտանիքների կողմից:

Հայաստանյան իշխանությունները պետք է շարունակաբար ջանքեր գործադրեն համապատասխանեցնելու ոստիկանական հաստատություններում ձերբակալվածներին պահելու պայմանները CPT-ի նախկին այցելությունների արդյունքում ներկայացված զեկույցներում տեղ գտած հիմնական պահանջներին: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու, որպեսզի՝

- բոլոր խցերը, որոնք նախատեսված են ձերբակալվածին 3 ժամից ավելի պահելու համար, կահավորված լինեն գիշերելու համար հարմար բոլոր միջոցներով.
- ձերբակալված բոլոր անձանց գիշերելու համար տրամադրվեն ներքնակներ և ծածկոցներ.
- ոստիկանական հաստատություններին հատկացվի հատուկ բյուջե, ձերբակալվածներին սնունդ ապահովելու համար:

30. Հաշվի առնելով այցելության բնույթը՝ CPT պատվիրակությունը մանրամասն չի ստուգել այցելված երեք քրեակատրոդական հիմնարկներում ազատագրվածներին պահելու

պայմանները: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում հարցված բազմաթիվ բանտարկյալներ բողոքեցին, որ չի ապահովվում իրենց բացօթյա վարժանքի իրավունքը (ավելի քան 10 օր): **CPT-ին առաջարկում է Հայաստանյան իշխանություններին քայլեր ձեռնարկել երաշխավորելու Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում բոլոր բանտարկյալների ամեն օր առնվազն 1 ժամ տևողությամբ բացօթյա վարժանքի իրավունքը:**

Ինչ վերաբերում է Երևան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկին, ապա այդ առնչությամբ 2004 թվականի մարտին արված առաջարկությունները մնում են ուժի մեջ (տես Հավելված I առաջարկությունների տեքստին ծանոթանալու համար):

## ՀԱՎԵԼՎԱԾ I

**Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) կողմից ներկայացվող առաջարկությունները, մեկնաբանությունները և տեղեկատվության տրամադրման խնդրանքները**

### **1. Նախնական դիտողություններ**

#### առաջարկություններ

Հայաստանյան իշխանությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցառումներ երաշխավորելու, որ գործնականում ամբողջությամբ ապահովվի անձի ազատության սահմանափակումը /մասնավորապես ոստիկանության ձերբակալման ժամկետները/ կարգավորող իրավական նորմերի կատարումը: Պետք է ձեռնարկվեն նաև միջոցառումներ, որոնք կապահովեն ձերբակալման ժամի ճշգրիտ նշումը ոստիկանության ձերբակալման արձանագրության մեջ (կետ 11):

### **2. Խոշտանգումներ և վատ վերաբերմունքի այլ ձևեր**

#### առաջարկությունները

- Հայաստանյան իշխանությունները պետք է իրավապահ բոլոր մարմինների աշխատակիցներին պարզաբանեն, որ անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքը անօրինական է և խստորեն կապտժվի՝ մեղավորներին ենթարկելով քրեական պատասխանատվության: Իրավապահ մարմինների աշխատակիցներին պետք է անհրաժեշտ միջոցներով պարբերաբար հիշեցվի, որ ձերբակալման ընթացքում չպետք է գործադրվի առավել ուժ, քան միայն անհրաժեշտ է, և որ անձի ձերբակալումից և նրա նկատմամբ հսկողություն հաստատելուց հետո, նրանց ծեծի ենթարկելու համար որևէ արդարացում չի կարող լինել (կետ 14):

- Հայաստանյան իշխանությունների կողմից պետք է իրականացվի ոստիկանության աշխատակիցների կողմից 13-րդ կետում նշված երրորդ անձին խոշտանգելու և նրա նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի վերաբերյալ փաստերի արդյունավետ քննություն (կետ 14):

- դատավորների դերը պետք է կայանա նրանում, որ անձանց դատարան ներկայացնելիս ոստիկանների կողմից վատ վերաբերմունք ցուցաբերվելու դեպքերը պետք է քննարկվեն դատական մարմինների կողմից, ելնելով այն տեսանկյունից, որ պետք է հիշեցվի դատավորներին քրեական հետապնդում սկսելու իրենց պարտավորությունների մասին (կետ 15):

- Հայաստանյան իշխանությունները ոստիկանության աշխատակիցների համար պետք է իրականացնեն ամբոխի նկատմամբ վերահսկողություն հաստատելու հատուկ դասընթացներ,

ինչպես նաև ապահովեն անհրաժեշտ նախապատրաստական միջոցներ այդ ուղղությամբ (կետ 19):

- 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների քննությունը պետք է իրականացվի 21-րդ կետում նշված արդյունավետ քննության չափորոշիչներին համապատասխան (կետ 21):

### դիտողություններ

- CPT-ին նաև իր մտահոգությունն է հայտնել իրավապահ մարմինների դիմակավորված աշխատակիցների կողմից ձերբակալություններ իրականացնելու փաստի կապակցությամբ. սա իրականում բարդացնում է պոստեցիալ մեղավորների ինքնության ճանաչումը: Կոմիտեն գտնում է, որ միայն բացառիկ դեպքերը կարող են արդարացնել իրենց պարտականությունները կատարելիս իրավապահ մարմինների աշխատակիցների ինքնությունը թաքցնելը: Նման դեպքերում պետք է ապահովվեն բոլոր անհրաժեշտ պայմանները այդ աշխատակիցների ինքնությունը հետագայում բացահայտելու և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրենց արարքների համար պատասխանատվության ենթարկելու համար (օրինակ՝ համազգեստի վրա հստակ երևացող համար օգտագործելով) (կետ 21) :

- 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների քննության արդյունքները պետք է օգտագործվեն ապագայում որպես ուղեցույց՝ ոստիկանության գործողությունների պլանավորման և համապատասխան տակտիկայի մշակման առումով ամբոխի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար (կետ 21):

### պահանջվող տեղեկատվություն

- 14-րդ կետին վերաբերող հետաքննության արդյունքները (կետ 14).
- հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալված անձանց կողմից ներկայացված դիմում-բողքների թիվը ոստիկանության աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ, դրանց արդյունքում հարուցված կարգապահական տույժերի և/կամ սկսված քրեական վարույթների քանակը և կիրառված ցանկացած պատժամիջոցներ (կետ 15).
- արդյոք ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին դիմում-բողքների գրանցման կենտրոնացված համակարգը դարձել է գործնականում աշխատող (կետ 16).
- տրամադրել Ոստիկանության կարգապահական նոր կանոնադիրքը (կետ 16).
- իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից 2008 թվականի մարտի 1-ի գործողության ժամանակ օգտագործված «հատուկ միջոցների» կոնկրետ տեսակները: Կոմիտեն կցանկանար իմանալ, մասնավորապես, թե արդյո՞ք կիրառվել են ռետինե

գնդակներ, և եթե այո՝ իրականում քանի ռետինե գնդակ է արձակվել այդ գործողության ժամանակ (կետ 18):

- տեղեկատվություն Հայաստանում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ռետինե գնդակներ օգտագործելու համար կիրառվող օրենսդրության, ինչպես նաև պաշտպանության այդպիսի միջոց օգտագործելու հետ կապված ստացված հրահանգների և ուսուցման վերաբերյալ (կետ 18):
- 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ուսումնասիրությունների արդյունքը և այդ առնչությամբ ձեռնարկված միջոցառումները (կետ 21):

### 3. Երաշխիքներ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ

#### առաջարկություններ

- ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որպեսզի ձերբակալված բոլոր անձինք իրենց ազատության սահմանափակման պահից սկսած արդյունավետորեն օգտվեն ձերբակալման մասին տեղեկացնելու իրավունքից: Այդ իրավունքից օգտվելը պետք է գրավոր արձանագրվի մատչանում կամ այլ կերպ (կետ 23):
- Հայաստանյան իշխանությունները պետք է ապահովեն, որպեսզի փաստաբանի օգնություն ստանալու իրավունքն արդյունավետորեն իրականացվի ազատությունից զրկված անձանց կողմից՝ ոստիկանության կողմից նրանց ազատության սահմանափակման պահից: Այս կապակցությամբ քննիչներին պետք է տրվեն համապատասխան հրահանգներ (կետ 24):
- Փաստաբանական պալատի հետ համագործակցելով՝ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ իրավաբանական օգնության տրամադրման համակարգը իրապես արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ոստիկանությունից և դատախազությունից *ex officio* փաստաբանների անկախությունն ապահովելու ուղղությամբ (կետ 24):
- Հայաստանյան իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն ձերբակալված անձանց բժշկական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ դրույթների գործնական կիրառման արդյունավետության ապահովման ուղղությամբ: Գործող դրույթները պետք է լրացվեն այնպես, որ հաստակ լինի, որ՝
  - o բժշկական օգնությունը պետք է մատչելի լինի ազատության *de facto* սահմանափակման պահից (այլ ոչ թե միայն այն պահից, երբ անձը տեղափոխվել է ոստիկանության մեկուսարան)։
  - o բոլոր բժշկական զննությունները պետք է իրականացվեն ոստիկանության աշխատակիցների լսողության, իսկ բժշկի կողմից կոնկրետ իրավիճակում հակառակը չպահանջելու դեպքում՝ նաև տեսողության սահմաններից դուրս։
  - o յուրաքանչյուր բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև դրա հետ կապված ձերբակալված անձի կողմից կատարված հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է պատշաճ արձանագրվեն բժշկի կողմից և մատչելի լինեն ձերբակալված անձի ու նրա փաստաբանի համար։

- այդուհանդերձ, բժշկի կողմից ցանկացած այնպիսի վնասվածք արձանագրելու դեպքում, որը համապատասխանում է վատ վերաբերմունքի վերաբերյալ ձերբակալված անձի պնդումների հետ, համապատասխան արձանագրությունները պետք է պարբերաբար ներկայացվեն համապատասխան դատախազի ուշադրությանը (կետ 25):

- Հայաստանյան իշխանությունները պետք է ձեռնարկեն հետագա քայլեր երաշխավորելու բոլոր ձերբակալված անձանց իրենց ազատության սահմանափակման առաջին իսկ պահից իրենց իրավունքների մասին պարբերաբար բանավոր տեղեկացվելու իրավունքը: Ինչ վերաբերում է տեղեկացվող իրավունքների ցանկին, ապա այն պետք է պարբերաբար տրվի բոլոր ձերբակալված անձանց, վերջիններիս ռատիկանություն բերելու պահից և պետք է գրված լինի անհրաժեշտ մատչելի լեզուներով (կետ 26):

#### պահանջվող տեղեկատվությունը

- ինչպես կարող է դատաբժշկական քննություն անցկացնելու մասին պահանջը անմիջականորեն ներկայացվել ռատիկանության կողմից ձերբակալված անձանց կողմից (կետ 25);

- Հայաստանյան իշխանությունների մեկնաբանությունները 27-րդ կետում բարձրացված հարցի կապակցությամբ (կետ 27):

#### **4. Ձերբակալվածներին պահելու վայրերի պայմանները**

##### առաջարկություններ

- Հայաստանյան իշխանությունները պետք է շարունակաբար ջանքեր գործադրեն համապատասխանեցնելու ռատիկանական հաստատություններում ձերբակալվածներին պահելու պայմանները CPT-ի նախկին այցելությունների արդյունքում ներկայացված զեկույցներում տեղ գտած հիմնական պահանջներին: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու, որպեսզի՝

- բոլոր խցերը, որոնք նախատեսված են ձերբակալվածին 3 ժամից ավելի պահելու համար, կահավորված լինեն գիշերելու համար հարմար բոլոր միջոցներով.
- ձերբակալված բոլոր անձանց գիշերելու համար տրամադրվեն ներքնակներ և ծածկոցներ.
- ռատիկանական հաստատություններին հատկացվի հատուկ բյուջե, ձերբակալվածներին սնունդ ապահովելու համար (կետ 29):

- Հայաստանյան իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն, որպեսզի Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում պահվող բոլոր բանտարկյալները կարողանան ամեն օր օգտվել նվազագույնը մեկ ժամյա զբոսանքի իրավունքից (կետ 30):

- ինչ վերաբերում է Երևան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկին, ապա 2004 թվականի մարտին կատարված այցելության արդյունքում ներակայացված զեկույցում տեղ գտած առաջարկությունները մնում են ուժի մեջ, այսինքն Հայաստանյան իշխանությունները պետք է միջոցներ ձեռք առնեն`
  - o ապահովելու, որպեսզի բոլոր խցերում, ինչպես նաև լոգանք ընդունելու վայրերում վերանորոգվեն և դրանցում պահպանվեն բավարար մաքրության պահանջները.
  - o բարելավել հիմնարկների զբոսահրապարակները.
  - o շարունակել բարելավել բանտարկյալների պայմանները (կետ 30):

#### մեկնաբանություններ

- Երևանի Ազգային անվտանգության ծառայության ձեռքարկվածներին ժամանակավորապես պահելու վայրի 7 քառ. մ. տարածքով խցերը պետք է օգտագործվեն որպես մեկ տեղանի խուց (կետ 28):

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### **ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՒՄ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՑԿԱՅՐԵԼ CPT-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Ա. Իշխանություններ**

##### **Արդարադատության նախարարություն**

Պրն. Գևորգ ԳԱՆԻԵԼՅԱՆ  
Պրն. Նիկոլայ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ

Արդարադատության նախարար  
Արդարադատության նախարարի տեղակալ

##### **Ոստիկանություն**

Պրն. Արարատ ՄԱՀՏԵՍՅԱՆ  
Պրն. Սաշա ԱՖՅԱՆ  
Պրն. Էդվարդ ՂԱԶԱՐՅԱՆ  
Պրն. Վալերի ԽՈՒԲԼԱՐՅԱՆ

Ոստիկանության պետի առաջին տեղակալ  
Ոստիկանության պետի տեղակալ  
Ոստիկանության աշխատակազմի ղեկավար  
Հասարակական կարգի պահպանման  
վարչության պետ  
Բուժվարչության պետ  
Հասարակայնության հետ կապերի վարչության  
պետ

##### **Գլխավոր դատախազություն**

Պրն. Արամ ԹԱՄԱԶՅԱՆ  
Պրն. Շահում ՏԻԳՐԱՆՅԱՆ  
  
Պրն. Հակոբ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Գլխավոր դատախազի տեղակալ  
Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների  
կիրառման նկատմամբ հսկողություն  
իրականացնող վարչության պետ  
Գլխավոր դատախազի հրամանով ստեղծված՝  
2008թ.-ի մարտի 1-ի դեպքերի քննության  
նպատակով ստեղծված քննչական խմբի կողմից  
իրականացված նախաքննության նկատմամբ  
դատավարական հսկողություն իրականացնող  
դատախազ  
Միջազգային-իրավական կապերի բաժին  
Մամլո քարտուղար

##### **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ**

Պրն. Արմեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարդու իրավունքների պաշտպան

##### **Դատական բժշկության հանրապետական կենտրոն**

Պրն. Շոթա ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնօրեն

**Բ. Ոչ կառավարական կազմակերպություններ և այլ անձինք**

Հելսինկայն ասոցիացիա

Մարդու իրավունքների դիտարկում

Ձերբակալվածների իրավունքների դիտարկման հասարակական վերահսկողության խումբ

Հետընտրական իրադարձությունների առնչությամբ հարուցված գործերով ձերբակալված անձանց դատապաշտպաններ